ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Գ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

1990 թ. հուլիսի 2-ից 13-ը տեղի ունեցավ ԽՄԿԿ XXVIII համագումարը, որը պետք է պատասխան տար մեր երկրի ու ժողովրդի համար կենսականորեն կարևոր հարցերի. արդարացված է արդյո՞ք 1985 թ. ապրիլին սկսված շրջադարձը, այսօր ի՞նչ իմաստ ենք դնում «սոցիալիզմ» հասկացության մեջ, ինչպե՞ս հաղթահարենք ճգնաժամային երևույթները, որն է կուսակցության տեղը նոր պայմաններում։

Համագումարի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն տեղի ունեցավ հրապարակայնության, բացախոսության, քննադատության, մրցքերի աղատ փոխանակման մթնոլորտում։ Դեռ մինչև համագումարը մամուլում հրապարակվել էին ԽՄԿԿ-ի Կենտկոմի «Դեպի մարդկային, դեմոկրատական սոցիալիզմ» պլատֆորմի և կուսակցության նոր կանոնադրության նախագծերը։ Դրանք քննարկվեցին կուսակցական կազմակերպություններում, աշխատավորական կոլեկտիվներում, մամուլի էջերում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ։ Այդ ոգին շարունակվեց նաև համագումարում։ Բավական է նշել, որ մտքերի փոխանակությանը մասնակցելու համար ցուցակագրվել էին մոտ 2000 մարդ։ Ընդհանուր հաշվով, ներառյալ նաև միկրոֆոնի մոտ և սեկցիաներում կայացած ելույթները, իրենց տեսակետը հայտնեցին համագումարի 900 մասնակիցներ։ Դժբախտաբար, բոլոր ցանկացողներին, այդ թվում Արցախի պատվիրակներին, հնարավորություն չտրվեց ելույթ ունենալ։ Համագումարի օրակարգում կային շատ հարցեր, ընդունվեցին բազմաթիվ որոշումներ։ Քանի որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ արծարծել բոլորը, կանդրադառնանք միայն մի քանի հարցերի։

Համագումարը քննարկեց ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական հաշվետվությունը (զեկուցող Մ. Ս. Գորբաչով)։ Հաշվետվության մեջ նշվեց, որ համագումարը հրավիրվել է չափազանց պատասխանատու փուլում։ Հարցը դրված է այսպես՝ կամ հասարակությունը առաջ կգնա վերափոխումների ուղիով, կամ էլ կհաղթեն հակավերակառուցողական ուժերը և այնժամ երկրին մռայլ ժամանակներ են սպասում։ Վերակառուցման ճանապարհին ձեռք են բերվել որոշ արդյունքներ։ Ամենից առաջ, սոցիալիզմի ստալինյան մոդելին փոխարինելու է գալիս քաղաքացիական հասարակությունը։ Վերափոխվում է երկրի քաղաքական համակարգը՝ ազատ ընտրություններով, բազմակուսակցականության հնարավորություններով, հրապարակայնությամբ ու բացախոսությամբ։ Սկսվել է գերկենտրոնացված պետության վերափոխումը դաշնակցային պետության՝ հիմնված ժողովուրդների ինքնորոշման և կամավոր միավորման վրա։

Նոր քաղաքական մտածողության հիման վրա Խորհրդային Միությունը որոշակի հաջողություններ է հասել միջազգային հարաբերություններում։ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի հարաբերություններում շրջադարձ տեղի ունեցավ՝ առճակատումից և սպառազինությունների մրցավազքի ասպարեզում մրցակցությունից դեպի փոխըմբռնում։ Հնարավորություն է ստեղծվել կրճատելու ռազմական ծախսերը և դրանք օգտագործել խաղաղ նպատակներով։ Բարելավվել են հարաբերությունները Չինաստանի հետ։ ԽՍՀՄ-ը իր զորքերը դուրս է բերել Աֆղանստանից, միաժամանակ դատապարտելով Երկրի նախկին ղեկավարության մեղքով սանձազերծված պատերազմն այդ երկրում։ Մեր պետության պատմության մեջ առաջին անգամ ԽՍՀՄ-ը լավ՝ ու բարյա-

ական հարաբերություններ է հաստատել եվրոպական մայրցամաքի երկրների մեծամասնության հետ։ Հայտնի է, որ վերջին ժամանակներս խոր փոփոխություններ են տեղի ունենում Արևելյան Եվրոպայի երկրներում։ Ի՞նչ դիրք պետք է ունենա Խորհրդային Միությունը։ Համագումարը միանշանակ հայտարարեց, որ Խորհրդային Միությունը չի կարող միջամտել նրանց ներքին գործերին, ինչպես եղել է նախկինում, այլ պետք է խստիվ առաջնորդվի ազատ ընտրության սկզբունքով։ Խորհրդային Միությունը այսօր և ապագայում այդ երկրների հետ պետք է հարաբերություններ վարի որպես բարեկամ հարևաններ։

Խոսելով միջազգային հարաբերությունների մասին հարկ է նշել, որ XXVIII համագումարն ընդունեց նաև բանաձև «Արդի փուլում կուսակցություն ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մասին»։ «ԽՄԿԿ-ն,—ասված է այդ փաստաթղթում,—խաղաղության ամրապնդումը համարում է արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղությունը և ըստ ամենայնի կնպաստի միջազգային լարվածության թուլացման գործընթացներին։ ԽՄԿԿ-ն հանդես է գալիս խորհրդային պաշտպանողական ռազմական դոկտրինայի իրականացման ու հետևողական զարգացման օգտին և հավաստում է իր պատրաստակամությունը՝ նպաստելու միջազգային անվտանգության համապարփակ համակարգի ձևավորմանը, այդ նպատակով ռազմաքաղաքական համագործակցության ընդլայնմանը, դեպի պատերազմներից ու բռնություններից զերծ աշխարհ շարժվելուն»[1]։

Համագումարում սուր վեճեր, իրարամերժ կարծիքներ եղան շուկայական էկոնոմիկային անցնելու, ագրարային սեկտորում եղած վիճակի, պարենային ու էկոլոգիական պրոբլեմների, հոգևոր ոլորտի, կուսակցության նորացման ուղղությունների, մեր նոր արտաքին քաղաքականության, երկրում կարգ ու կանոն հաստատելու և այլ հարցերի մասին։ Համագումարի կարևոր կողմերից մեկն այն էր, որ այն ընթացավ քննադատական ոգով, մասնավորապես Կենտրոնական կոմիտեի քաղաքական հաշվետվության առթիվ ընդունված բանաձևում քննադատաբար է գնահատված վերջին հինգ տարում Կենտկոմի քաղբյուրոյի գործունեությունը։ Ընդգծվեց, որ կուսակցության ղեկավար մարմինները հարկ եղածին չափ հաշվի չեն առել ձեռնարկված կոնկրետ քայլերի տնտեսական, սոցիալական ու բարոյական հետևանքները, անբավարար է եղել ընդունված որոշումների կատարումը կազմակերպելու Կենտրոնական կոմիտեի գործունեությունը։ Որպես հետևանք՝ չլուծված մնացին ԽՄԿԿ XXVII համագումարի և 19-րդ համամիութենական կուսկոնֆերանսի առաջադրած շատ խնդիրներ, ինչը ուժեղացրեց ճգնաժամային երևույթները, սրեց իրադրությունը հասարակության ու կուսակցության մեջ։ Կտրուկ թուլացավ պետական ու աշխատանքային կարգապահությունը, աճեցին հանցագործությունը, կաշառամոլությունը, սպեկուլյացիան, հարբեցողությունն ու թմրամոլությունը։ Երկրի շատ ռեգիոններ դուրս չեն բերվում էկոլոգիական աղետի վիճակից։ Ձախողվում են Հայաստանում երկրաշարժի հետևանքները վերացնելու պետական ծրագրերը։

Ազգամիջյան հարաբերությունների սրվելն անակնկալի բերեց կուսակցությանը։ Կոնֆլիկտները կարգավորելիս Կենտկոմը հաճախ չէր տիրապետում նախաձեռնությանը, հաշտվում էր ձեռնարկվող կիսատ-պռատ միջոցառումների հետ։ Կուսակցության ղեկավարությունն անընդհատ ձգձգում է միութենական նոր դաշնագրի կնքումը։ Անհրաժեշտ է արմատապես կատարելագործել կուսակցության Կենտկոմի, նրա քաղբյուրոյի, քարտուղարության գործունեությունը։

XXVIII համագումարում իրենց գործունեության մասին հաշվետվություններով հանդես եկան քաղբյուրոյի անդամները, անդամության թեկնածուները, Կենտկոմի քարտուղարները։ Դա, իհարկե, նորություն էր կուսակ-

[1] Խորհրդային Հայաստան, 14. VII. 1990։

յության պատմության մեջ։ Սակայն ինչպես իրենց ելույթներում նշեցին մի շարք պատգամավորներ, դրանց մեծ մասը հիշեցնում է ոչինչ չասող հերթական հաշվետվություն, որը բովանդակությամբ, ձևով ու մակարդակով չբավարարեց լսողներին։ Համագումարի մի շարք պատգամավորներ առաջարկեցին, որ գնահատվի ոչ միայն Կենտկոմի ու նրա քաղբյուրոյի աշխատանքը, այլև քաղբյուրոյի անդամների և Կենտկոմի քարտուղարների գործունեությունը։ Բայց մեծամասնությունը չհամաձայնվեց այդ առաջարկի հետ։ Կարծում ենք, որ դա ճիշտ կլիներ, կբարձրացներ ղեկավար աշխատողների պատասխանատվությունը և դաստիարակչական մեծ նշանակություն կունենար։ Այս առիթով ակամայից հիշում ես Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները։ Այժմ այնտեղ տեղի ունեցող հեղափոխական վերափոխությունների ընթացքում նախկին ղեկավարների գործունեությունը ոչ միայն սուր քննադատության է ենթարկվում, այլև շատերը պատասխանատվության են կանչվում իրենց կատարած հանցանքների ու զանցանքների համար։ Իսկ մեր երկրում, ցավոք, ոչ ոք պատասխանատվություն չի կրում։

ԽՄԿԿ XXVIII համագումարն ընդունեց ծրագրային հայտարարություն՝ «Դեպի մարդասիրական, դեմոկրատական սոցիալիզմ»։ Այդ փաստաթուղթը պետք է փոխարինի կուսակցության ծրագրին։ Այն բաղկացած է երկու բաժնից. 1. հասարակության ճգնաժամը և կուսակցության ստրատեգիական նպատակները։ 2. ԽՄԿԿ գործողությունների ծրագիրը։ Փաստաթղթում տրված են ընթացիկ պահի գնահատականը, դեմոկրատական սոցիալիզմի բնութագիրը, ճգնաժամից դուրս գալու շտապ միջոցները, ցույց է տրված, թե ի՞նչ պետք է արվի մարդու ազատության ու բարեկեցության ապահովման, արդյունավետ էկոնոմիկայի ստեղծման, իսկական ժողովրդապետության հասնելու, ազգամիջյան հարաբերությունների կարգավորման, կուսակցության նորացման ու դեմոկրատացման համար։

Ի՞նչ հասարակության ենք մենք ձգտում։ Հայտարարության մեջ տրված է այդ հարցի պատասխանը։ «Վերակառուցման էությունը,—ասված է այնտեղ,—անցումն է ավտորիտար բյուրոկրատական կարգերից դեպի մարդասիրական, դեմոկրատական սոցիալիզմի հասարակություն։ Դա թեև դժվարին, բայց միակ ճիշտ ուղին է դեպի արժանավայել կյանք, դեպի երկրի նյութական ու հոգևոր պոտենցիալի իրացում[2]։ Ծրագրային հայտարարության մեջ, մասնացույց են արվում դեմոկրատական սոցիալիզմի հետևյալ բնորոշ գծերը։ Դա այնպիսի հասարակություն է, որտեղ. ա) հասարակական զարգացման նպատակը մարդն է։ Նրա համար ստեղծվում են քաղաքակրթությանն արժանի կենսապայմաններ և աշխատապայմաններ, հաղթահարվում է մարդու օտարացումը քաղաքական իշխանությունից և նյութական ու հոգևոր արժեքներից, ապահովվում է նրա ակտիվ ներգրավումը հասարակական գործընթացի մեջ։ բ) Սեփականության ու տնտեսավարման զանազան ձևերի հիման վրա ապահովվում են աշխատավորների վերածումը արտադրության տերերի, երաշխավորվում է սոցիալական արդարությունն ու աշխատավորների սոցիալական պաշտպանվածությունը։ գ) Իշխանության միակ աղբյուրը ժողովրդի սուվերեն կամքն է, պետությունը երաշխավորում է մարդու իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, անկախ նրա սոցիալական դրությունից, ազգային պատկանելությունից ու դավանանքից, իրականացվում է օրենքի շրջանակներում գործող բոլոր հասարակական քաղաքական ուժերի ազատ մրցություն։ դ) Դեմոկրատական սոցիալիզմը դա մի հասարակություն է, որը հետևողականորեն հանդես է գալիս ժողովուրդների խաղաղ և իրավահավասար համագործակցության, յուրաքանչյուր ժողովրդի իր բախտը տնօրինելու իրավունքների հարգման օգտին[3]։

---

2 Նույն տեղում, 17. VII. 1990։

3 Նույն տեղում։

Նախատեսվում են ճգնաժամից դուրս գալու մի շարք անհետաձգելի միջոցառումներ։ Ամենից առաջ խնդիր է դրվում արդեն այս տարի մշակել ԽՍՀՄ որպես սուվերեն պետությունների միության մասին նոր դաշնադիր՝ հիմնված կամավորության, փոխշահավետության, ազգային ինքնորոշման ազատության վրա։

Սոցիալ տնտեսական բնագավառում 1,5—2 տարվա ընթացքում պետք է նորմալացվի սպառողական շուկան, կայունացվի դրամաշրջանառությունը, էականորեն մեծացվեն բնակարանային շինարարության ծավալները, լրացուցիչ հատկացումներ կատարվեն առողջապահության համար, արտակարգ օգնություն ցույց տրվի էկոլոգիապես տուժած և տարերային աղետների զոհերին, ընդունվի փախստականների սոցիալական կարգավիճակը, վճռականորեն ամրապնդվեն կարգապահությունը և իրավակարգը։

Դժվար է հավատալ, որ նշված քայլերը ժամանակին կյանքի կկոչվեն։ Հայտնի է, որ մեկ տարի առաջ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարում կառավարությունը դարձյալ խոստացավ 1,5—2 տարում կարգավորել վիճակը։ Սակայն ժամկետը անցել է, բայց ոչ մի տեղաշարժեր չեն կատարվել։ Դեռ ավելին, երկրում տիրող ճգնաժամը ավելի է խորացել։

Խորհրդային Միությունը բազմազգ երկիր է։ Հասկանալի է, որ նրա զարգացումը, վերակառուցման հաջողությունը պայմանավորված են մեծ մասամբ ազգամիջյան հարաբերությունների վիճակով։ Այդ բնագավառում նախկինում թույլ տրված սխալների և անարդարությունների վերացումը, ծագած պրոբլեմների արդարացի լուծումը մեծապես կնպաստեն երկրի ընդհանուր իրադրության առողջացմանը։ Բնականաբար, համագումարը պատշաճ ուշադրություն պետք է նվիրեր ազգամիջյան հարաբերություններին։ Սակայն, այդպես չեղավ։ Հարցը մնաց ստվերի տակ, դուրս մնաց ընդհանուր շղթայից։ Իհարկե, ազգամիջյան հարաբերությունների մասին խոսվում է և՛ քաղաքական հաշվետվության, և՛ բանաձևում, և՛ կուսակցության ծրագրային հայտարարության մեջ։ Դեռ ավելին, ընդունվեց առանձին բանաձև՝ «Դեմոկրատական ազգային քաղաքականությունը կամավոր միության, ժողովուրդների խաղաղության ու համաձայնության ուղին է»։ Իրավացիորեն քննադատելով ազգամիջյան հարաբերություններում նախկինում թույլ տրված սխալները՝ համագումարը չտվեց ծագած պրոբլեմների լուծման և ոչ մի կոնկրետ առաջարկ։ Փոխանակ ասելու ճշմարտությունը, իրերը կոչելու իրենց անուններով, քաղաքական գնահատական տալու երկրի տարբեր շրջաններում ծագած ազգամիջյան կոնֆլիկտներին, վանդալիզմի այնպիսի դրսևորումներին, ինչպես Սումգայիթը, Բաքուն, Ֆերգանան և այլն, կենտրոնը, ինչպես համագումարում ասաց ազգությունների խորհրդի նախագահ Ռ. Ն. Նիշանովը, խուսափում է նման գնահատականներից, որ նորից չսրվի իրադրությունը։ «Հանձնաժողովը,—ասաց նա,—ձգտել է չօգտագործել այն ձևակերպումները, որոնք կարող էին որևէ ռեգիոնում ազգային և ազգամիջյան կոնֆլիկտների նոր ալիք առաջացնել»[4]։ Սա ըստ էության հաշտվողական գիծ է։ Հարկավոր է ոչ թե թաքցնել փաստերը, այլ սկզբունքայնորեն բացահայտել ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառները, լուծել հասունացած հարցերը։ Այս դեպքում ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ չի վիրավորվի, ոչ մի ռեգիոնում իրադրությունը չի սրվի։ Կենտրոնը հիմնականում հանդես է գալիս ազգամիջյան ընդհարումներն արձանագրողի դերում։ Հարցերը լուծելու փոխարեն առաջարկվում է պատրաստի դեղատոմս՝ այս կամ այն վայրում սահմանել պարետային ժամ կամ մտցնել արտակարգ դրություն։ Բայց մինչև ե՞րբ կարելի է երկիրը կառավարել զինվորների ու տանկերի միջոցով։ Համագումարում իրավացիորեն նշվեց, որ ազգային հակասությունների սրությունը լուրջ հետևանքներ կունենա։ Եթե դա ընդունվում է, ինչո՞ւ կենտրոնական իշխանությունները չեն լուծում հասունացած

4 Նույն տեղում։

հարցերը, ինչո՞ւ չեն վերականգնում Ղրիմի թաթարների և Պովոլժիեի գերմանացիների ինքնավար հանրապետությունները, ինչո՞ւ անտարբեր են Արցախի հայության արդարացի պահանջների հանդեպ։ Ինչո՞ւ են արհամարհում ինքնավար կազմավորումների շահերը, նրանց պահանջները՝ բոլոր ազգերի համար ստեղծել իրական հավասարություն։ Կենտրոնին բնորոշ է մի այլ գիծ։ Զանազան պիտակներով բնութագրել ազգային շարժումները, դրանք որակել որպես ծայրահեղականների շարժում, որպես անջատական միտումներ։ Համագումարում, արդեն որերորդ անգամ ընդգծվեց, որ դրանից «օգտվեցին ամեն կարգի դեստրուկտիվ ուժերը՝ անջատականները, մոլի ազգայնականները, կաշառասուն տարրերը»[5]։ Ուրեմն եթե Արցախի հայ բնակչությունն այլևս չի ուզում մնալ Ադրբեջանի ճիրաններում, դա ազգայնամոլություն է, իսկ Ադրբեջանի ղեկավարության ձգտումը՝ հայ բնակչության նկատմամբ շարունակելու շովինիստական քաղաքականությունը՝ «հետևողական ինտերնացիոնալիզմ»։

Համագումարի ընդունած փաստաթղթերն աչքի են ընկնում ընդհանուր, դեկլարատիվ դրույթներով։ «ԽՄԿԿ-ն,—ասված է համագումարի բանաձևում,— կողմնակից է ինքնավար հանրապետությունների, ինքնավար մարզերի և օկրուգների սահմանադրական կարգավիճակի, իրավունքների ընդլայնմանը»[6]։ Այս թեզը վերջին 2—3 տարում մեկ փաստաթղթից փոխադրվում է մյուսը, բայց դրանից ազգային կազմավորումների իրավունքները չեն ընդլայնվում։ Ինչպես կարող են ընդլայնվել իրավունքները, եթե չի ընդունվում այդ կազմավորումների սուվերենությունը, եթե դրանք շարունակում են մնալ միութենական հանրապետությունների կազմում և կախված են նրանցից։

Համագումարի ընդունած ծրագրային հայտարարության մեջ ընդգծվում է, որ ԽՄԿԿ-ն հավաստում է «անցյալում բռնագաղթված ժողովուրդների հայրենիքի կամ բնակության ավանդական վայրի իրավունքը, ինչպես նաև արտասահմանից պատմական հայրենիք վերադառնալու քաղաքացիների իրավունքը»[7]։ Եթե սա ասված է անկեղծորեն, իրական ուժ ունի, ինչո՞ւ ԽՄԿԿ-ն, Խորհրդային Միությունը անտարբեր են հայ դատի նկատմամբ։

Ազգային հարաբերություններում շատ կարևոր է ազգերի ինքնորոշման իրավունքը։ Իհարկե, այժմ էլ ԽՄԿԿ-ն, խորհրդային պետությունը չեն հրաժարվում ազգերի ինքնորոշման իրավունքից։ Վերջին տարիներին ընդունված շատ փաստաթղթերում ու որոշումներում, այդ թվում նաև XXVIII համագումարում, ընդգծվում է, որ կուսակցությունը ելնում է ազգերի ինքնորոշման, ընդհուպ մինչև անջատման իրավունքի ընդունումից։ Սակայն այն ընդունվում է վերապահումներով։ Ինքնորոշման հակառակորդները ցանկանում են նենգափոխել սկզբունքի իմաստը, այն հանգեցնելով տնտեսական անկախության։ Բայց չէ որ իրական տնտեսական անկախությունը հնարավոր է միայն քաղաքական անկախության պայմաններում։ Շատերն էլ ինքնորոշումը, այս կամ այն ազգի քաղաքական անջատումը բնորոշում են որպես անջատողական միտում։ Նման մոտեցումն ըստ էության ժխտում է ինքնորոշման հնարավորությունը։

ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Ն. Գիրենկոն, որն ի պաշտոնե զբաղվում է ազգային քաղաքականության հարցերով, համագումարում խոսելով Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների սրման, Արցախի իրադարձությունների մասին ինքնորոշման իրավունքին հակադրել է սուվերենությունը։ Ժխտելով յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունքը, նա միաժամանակ և միանշանակ հայտարարեց, թե «պետք է հարգել ամեն մի հանրապետության սուվերեն իրավունքները։ Յուրաքանչյուր հանրապետու-

---

5 Նույն տեղում, 4. VII. 1990։

6 Նույն տեղում, 17. VII. 1990։

7 Նույն տեղում։

թյուն ունի իրավունքներ և դրանք պետք է հարգել»[8]։ Ստացվում է, որ եթե Արցախը ցանկանում է դուրս գալ Ադրբեջանի կազմից, ապա դրանով իսկ խախտում է նրա սուվերենությունը։ Այդ դեպքում պետք է վերացնել նաև միութենական հանրապետությունների ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավունքը, ըստ Ա. Ն. Գիրենկոյի «տեսության» համաձայն դա կհակասի ԽՍՀՄ սուվերենությանը։ Ոմանք էլ պնդում են, որ ինքնորոշման համար շարժումը պաշտպանող երրորդ կողմի գործողությունները միջամտություն են այն պետության ներքին գործերին, որից ուզում է անջատվել ինքնորոշման ձգտող ժողովուրդը։ Հավանաբար նրանք չգիտեն կամ չեն ուզում իմանալ, որ մշակվել և ընդունվել են միջազգային իրավական նորմեր, որոնք բացառում են ինքնորոշման իրավունքի ճանաչմանը ձգտող ժողովուրդներին ցույց տրվող օգնությունը որպես պետության ներքին գործերին միջամտություն որակելու հնարավորություն։

Մի հարցի մասին ևս։ Ինքնորոշման իրավունքի դեմ հանդես եկողները համագումարում առաջ քաշեցին մի նոր թեզ՝ առաջնայինը ոչ թե ազգերի իրավունքներն են, այլ մարդու իրավունքները։ Անդրադառնալով միութենական հանրապետությունների և ինքնավար կազմավորումների իրավունքների հարցին, Մ. Ս. Գորբաչովը համագումարում հայտարարեց. «Ընդ որում մնում է ազգային սուվերենության և ինքնավարության ցանկացած շահերի նկատմամբ մարդու իրավունքների առաջնայնության պահանջը։ Այն պետք է վավերացվի միության և յուրաքանչյուր հանրապետության սահմանադրական կառուցվածքի մեջ։ Այդ սկզբունքից, որով մենք ղեկավարվում ենք նաև միջազգային ասպարեզում, չի կարելի նահանջել ոչ մի քայլ»[9]։ Համագումարի բանաձևում այս միտքը շարադրվեց այլ ձևով։

Ի՞նչ կարելի է ասել այս մասին։ Հայտնի է, որ մարդու իրավունքներն ու ժողովուրդների ինքնորոշման իրավունքը փոխադարձաբար կապված են։ Չի կարող խոսք լինել մարդու իրավունքներից ու ազատություններից օգտվելու մասին, եթե չի ճանաչվում նրա կոլեկտիվ իրավունքը՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ընդհակառակը՝ անհնար է իրականացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները։ Եվ պատահական չէ, որ մարդու իրավունքների մասին միջազգային բոլոր ակտերը ժողովուրդների ինքնորոշման իրավունքը դասում են մարդու հիմնական իրավունքների թվին։ Ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի խախտումը կամ սահմանափակումը մարդու գլխավոր իրավունքների և հիմնական ազատությունների ուղղակի ու անմիջական խախտում է։ Պետությունը, որից անջատվում է ժողովուրդը, ոչ միայն չպետք է խոչընդոտի ինքնորոշման իրավունքի ազատ իրականացմանը, այլև պետք է ակտիվորեն նպաստի այդ իրավունքի իրացմանը։ Դեռ ավելին, բոլոր պետությունները պարտավոր են հարգել ինքնորոշման իրավունքը նույնիսկ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է կողմնակի ժողովրդին։

Համագումարում առանձին պատգամավորներ նշեցին, որ ինքնավարության պայմաններում ինքնորոշման իրավունքի ճանաչումը ավերիչ ուժ կլինի։ Հարցադրումը առնվազն տարօրինակ է։ Միութենական հանրապետությունը իրավունք ունի դուրս գալ նույնիսկ ԽՍՀՄ-ից, իսկ ինքնավար կազմավորումները առհավետ զրկվում են այդ իրավունքից։ Սա ըստ էության իշխող ազգի շովինիզմի հիմնավորման հոչակում է։ Այսպիսով, մի կողմից, ԽՄԿԿ-ն և խորհրդային պետությունը խոսքով հայտարարում են ինքնորոշման իրավունքը ճանաչելու մասին, բայց իրականում ամեն ինչ անում են, որ այդ հանրահայտ իրավունքը չիրագործվի։

Ինչպես հայտնի է, ԽՄԿԿ XXVII համագումարն ընդունեց կուսակցության ծրագրի նոր խմբագրությունը՝ հաշվի առնելով վերջին քառորդ դարում

---

8 Правда, 10. VII. 1990.

9 Խորհրդային Հայաստան, 4. VII. 1990։

կատարված փոփոխությունները։ Սակայն կյանքը ցույց տվեց, որ ծրագիրն ընդունվել է հապճեպ և նրանում տեղ են գտել սխալներ ու անճշտություններ։ Այդ կապակցությամբ XXVIII համագումարը որոշում ընդունեց «ԽՄԿԿ նոր ծրագրի նախապատրաստման մասին»։ Կազմվեց հանձնաժողով, որը համագումարի ծրագրային հայտարարության հիման վրա պետք է մշակի ծրագրի նախագիծը և 1991 թ. առաջին կեսին հրապարակի քննարկման համար, իսկ 1992 թ. կեսերին ծրագրի նախագիծը պետք է քննարկվի կուսակցության համագումարում կամ համամիութենական կոնֆերանսում։

Համագումարի կենտրոնական հարցերից մեկը կուսակցության դերի, ճակատագրի, նրա նորացման ու դեմոկրատացման հարցն էր։ Լուրջ մտահոգություն հայտնվեց, որ կուսակցությունը կորցնում է հեղինակությունը, նրա դիրքերը թալանում են, նրա շարքերից հեռանում են մեծ թվով մարդիկ։ Ի՞նչ պետք է արվի այդ միտումները կանգնեցնելու, կուսակցությունը նորացնելու համար։ Համագումարը միանշանակ հայտարարեց, որ ԽՄԿԿ-ն որպես կառավարող կուսակցություն քաղաքական ու բարոյական պատասխանատվություն է կրում երկրում ստեղծված գրության համար։ Կուսակցությունը վճռականորեն հրաժարվում է գաղափարախոսական, քաղաքական և իշխանության մենաշնորհից, պետական և տնտեսական մարմիններին փոխարինելուց։ Հուսանք, որ այս հայտարարությունը թղթի վրա չի մնա։ Խնդիր դրվեց արագացնել ԽՄԿԿ-ի վերափոխումը հիրավի քաղաքական կուսակցության։ Նա սոցիալիստական ընտրության և կոմունիստական հեռանկարի կուսակցություն է, որը արտահայտում և պաշտպանում է բանվորների, գյուղացիության, մտավորականության արմատական շահերը, գործում է քաղաքացիական հասարակության շրջանակներում։ Կուսակցությունը մշակում է սոցիալիստական նորացման ստրատեգիան ու տակտիկան, սոցիալ-տնտեսական, քաղաքական ծրագրերը։

Հասարակության մեջ ԽՄԿԿ-ն իր դերը չի կարող իրականացնել առանց ներկուսակցական հարաբերությունների ամենախոր դեմոկրատացման։ Դրան պետք է նպաստի կուսակցության նոր կանոնադրությունը, որն ընդունվեց համագումարում։ Դա կարևորագույն փաստաթուղթ է, որի հիման վրա ծավալվում է կուսակցության, նրա ղեկավար մարմինների և տեղական կազմակերպությունների գործունեությունը։ Կանոնադրության նախագիծը քննարկվել է և՛ համագումարի նախօրյակին, և՛ համագումարում։ Բավական է նշել, որ Կենտրոնական կոմիտեն ստացել է 200 հազարից ավելի առաջարկություն, դիտողություն, լրացում և 50-ից ավելի երկընտրանքային նախագիծ։ Համագումարի պատգամավորներից ստացվել է 500-ից ավելի փաստաթուղթ, որոնք պարունակում են 6 հազար առաջարկություն։ Դրանց մի զգալի մասն օգտագործվել է կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ մտցնելու համար։ Սուր բանավեճեր եղան կանոնադրության այնպիսի կետերի շուրջը, որոնք վերաբերում են կուսակցության բնույթին և սոցիալական բազային, պահպանել արդյո՞ք դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, թե ոչ, ինչպե՞ս պետք է իրագործվի կուսակցական կարգապահությունը, պահպանե՞լ, թե՞ վերացնել արտադրական կուսակցական կազմակերպությունները, ի՞նչ ձևերով ու մեթոդներով պետք է աշխատեն սկզբնական կուսակցական կազմակերպությունները, ինչպիսի՞ն պետք է լինեն կուսակցական կազմակերպությունները ԽՍՀՄ-ի զինված ուժերում, ԽՄԿԿ-ի փոխհարաբերությունները հասարակական կազմակերպությունների և շարժումների հետ և այլ կարևոր հարցեր։ «ԽՄԿԿ-ն,—կարդում ենք կանոնադրության մեջ,—քաղաքական կազմակերպություն է, որը ԽՍՀՄ քաղաքացիներին կամավոր հիմունքներով միավորում է համամարդկային արժեքների և կոմունիստական իդեալի վրա հիմնված ծրագրային նպատակների իրագործման համար։ Կուսակցությունը իր նպատակն է համարում երկրում մարդասիրական, դեմոկրատական սոցիալիզմի ստեղծումը, մար-

դու ազատ, բազմակողմանի զարգացման համար պայմանների ապահովումը»[10]։

Կանոնադրության մեջ մեծ ուշադրություն է նվիրված կուսակցական կառուցապահությանը։ Առաջարկ եղավ կանոնադրության մեջ գրի առնել, որ ստորադաս կուսակցական կազմակերպությունների համար պարտադիր կարող են լինել միայն կուսակցական համագումարների ու կոնֆերանսների որոշումները, իսկ կուսակցական կոմիտեների, բյուրոների որոշումները պետք է երեն միայն խորհրդատվական բնույթ։ Նման հարցադրումը ճիշտ էր և կարող էր նպաստել ներկուսակցական դեմոկրատիայի հետագա ծավալմանը։ Սակայն համագումարը ձայների մեծամասնությամբ մերժեց այդ առաջարկը։ Ընդունվեց այդ պարագրաֆի հետևյալ ձևակերպումը. «Նախապատրաստման փուլում կուսակցական կոմիտեների ու նրանց բյուրոների որոշումները քննարկվում են այն կուսակցական կազմակերպություններում, որոնց դրանք առնչվում են և ընդունումից հետո և պարտադիր են (ընդգծումը մերն է—Գ. Ա.) կատարման համար»[11]։ Նման կարգը կաշկանդում է սկզբնական կուսակցական կազմակերպություններին և կոմունիստներին։ Նույնը պետք է ասել նաև «Մեծամասնության ընդունած որոշումը պարտադիր է (ընդգծումը մերն է—Գ. Ա.) բոլորի համար» կետի մասին։

Դրա հետ կանոնադրությունը առաջին անգամ իրավունք է վերապահում փոքրամասնությանը պաշտպանելու իր դիրքերը ժողովներում, հատուկ կարծիքը հավաստել արձանագրությունում, պահանջել վիճելի հարցերի կրկնակի քննարկում։ Այսպիսի իրավունքը ձևական է դառնում, քանզի բոլոր դեպքերում ընդունված որոշումը պարտադիր է։ Կարելի է սահմանել այնպիսի կարգ, որ որոշումն ընդունված համարվի միայն այն դեպքում, եթե դրա օգտին քվեարկում է գործի հետ առնչվող կազմակերպությունը։ Այլապես մեծամասնությունն ընդունում է մի որոշում, որը վերաբերում է մի այլ կազմակերպության։ Համեմատության համար նշենք, որ սոցիալիստական Ինտերնացիոնալը, որի մեջ մտնում են 77 կուսակցություններ, ընդունում է միայն այնպիսի որոշումներ, որին համաձայն են բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները։

Կանոնադրության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացված սկզբնական կուսակցական կազմակերպություններին։ Առաջին անգամ նորմատիվային լայն հիմքի վրա վավերագրվում են դրանց ինքնուրույնության և ակտիվության երաշխիքները։ Դրանք ինքնուրույն են լուծում կուսակցության մեջ ընդունելության և ԽՄԿԿ անդամությունը կարճելու, իրենց կառուցվածքը, աշխատանքի ուղղությունները և մեթոդները, ժողովների անցկացման պարբերականությունը ու կարգը որոշելու, ֆինանսատնտեսական գործունեությունը վարելու հարցերը։

Նորություն է նաև այն, որ սկզբնական կուսակցական կազմակերպությունների գործունեության ֆինանսավորմանը հատկացվում է մուծված անդամավճարների գումարի մինչև 50 %-ը։ Այստեղ ասենք նաև, որ նոր կանոնադրությամբ անդամավճարների չափը կրճատվել է։

Առաջին անգամ կանոնագրության մեջ առանձին պարագրաֆ է նվիրվել միութենական հանրապետությունների կոմունիստական կուսակցություններին։ Հայտնի է, որ նախկին կանոնադրությամբ ազգային կոմունիստական կուսակցություններն ունեին մարզային կազմակերպության կարգավիճակ։ Նոր կանոնագրությունը հռչակում է միութենական հանրապետությունների կոմկուսների ինքնուրույնությունը։ Սա, իհարկե, լիակատար ինքնուրույնություն չէ, բայց առաջընթաց քայլ է այդ ճանապարհին։ Միութենական հանրապետությունների կոմկուսները ԽՄԿԿ-ի ծրագրի ու կանոնադրության շրջանակներում մշակում են իրենց սեփական ծրագրային փաստաթղթերը.

---

10 Նույն տեղում, 19. VII. 1990։

11 Նույն տեղում։

ինքնուրույն լուծում քաղաքական, կազմակերպական, կադրային, ֆինանսատնտեսական և այլ հարցեր։ Դրանք կարող են կապեր պահպանել այլ, այդ թվում արտասահմանյան կուսակցությունների հետ։

ԽՄԿԿ XXVIII համագումարը քննարկեց նաև կազմակերպական հարցեր։ Ընտրեց ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար (Մ. Ս. Գորբաչով) և գլխավոր քարտուղարի տեղակալ (Վ. Ա. Իվաշկո)։ Ընտրվեց նաև ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտե՝ 412 մարդուց և ԽՄԿԿ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի կազմ՝ 165 մարդուց։ Վերջինս նոր մարմին է, որը ստեղծվում է կուսակցության կենտրոնական մարմինների ու դրանց ապարատի գործունեությունը վերահսկելու նպատակով։

Համագումարի ընթացքը նորից ցույց տվեց, որ արտաքուստ ամեն ինչ լավ է։ Հրապարակայնություն, մտքերի ազատ փոխանակություն, քննադատիր ում և ինչպես ուզում ես։ Ընդունվել են բազմաթիվ որոշումներ ու բանաձևեր, որոնք շոշափում են մեր կյանքի գրեթե բոլոր կողմերը։ Սակայն շատ բան արվում էր հին ձևով ու մեթոդներով։ «Համագումարը,—ասել է պատվիրակներից մեկը,—իմ կարծիքով անցել է նախագահության թելադրանքով։ Նա չէր ուզում փոխել այն որոշումները, որոնք, բյուրոկրատական լեզվով ասած, նախօրոք մշակված և համաձայնված էին»[12]։ Հնարավոր է արդյո՞ք համագումարի որոշումների հիման վրա համախմբել ուժերը, առողջացնել իրադրությունը, փրկել կուսակցության հեղինակությունը՝ ցույց կտա ապագան։

СЪЕЗД СОВЕТСКИХ КОММУНИСТОВ

Г. М. АЙВАЗЯН

Резюме

XXVIII съезд КПСС проходил в переломный период. Съездом определены основные линии партийной политики во всех главных сферах жизни советского общества. Важным документом съезда стало программное заявление XXVIII съезда КПСС «К гуманному, демократическому социализму». В нем определены задачи по обновлению партии и общества. Съезд подчеркнул приверженность партии социалистическому выбору. Документ — основа деятельности партийных организаций до принятия новой программы. Решения съезда создают необходимые условия для широкого взаимодействия общественных сил во имя перестройки.

CONGRESS OF SOVIET COMMUNISTS

G. M. AJVAZIAN

Summary

The XXVIIIth congress of CPSU took place in a turning period. The main lines of party politics in all principal spheres of the soviet society life were determined by the congress. The important document of the congress was the programme declaration of the XXVIIIth congress of CPSU "To the humane, democratic socialism. The problems on renovation of party and the society are determined in it. The congress underlined the devotion of the party to the socialist choice. The document is the basis of the activity of party organizations before adoption of the new programme. The decisions of the congress create the necessary conditions for the wide interaction of social forces in the name of peresrrojka.

[12] Правда, 16. VII. 1990.